ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 113
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքը (Ստեփանավան քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Ստեփանավան համայնքի (Ստեփանավան քաղաքի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքը (Ստեփանավան քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-5 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի (Ստեփանավան քաղաքի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
06-007-1519-0013 կադաստրային ծածկագրով 0.25 հա մակերեսով ջրային հողեր	06-007-1519-0013 կադաստրային ծածկագրով 0.25 հա մակերեսովէներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ էներգետիկայի հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունների գրություններով ներկայացված պահանջները (կցվում են):

4. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Ստեփանավան քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ.Առաքելյան

Երևան, « 3 » «ապրիլի» 2025 թ.